ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

(ՆՎԷՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ)

Թե հազար սիրտ, հազար գարուն ունենամ՝
Այն քեզ կտամ, Սովետական Հայրենիք,
Քեզ հետ մի սիրտ, մի թև դարձած
կը սուրամ,
Թե հազար սիրտ, հազար գարուն ունենամ։

Մեր բանվորին և գյուղացուն առնական,
Արևաշուրթ մանուկներին անթառամ,
Կյանքս, սիրտս, բարևներս ես կտամ,
Թե հազար սիրտ, հազար գարուն ունենամ։

Նոր միայն ես կառնեմ թևեր հաղթական,
Արև, աստղերն իմ հոգու մեջ կը լողան,
Ու իմ սիրո կարոտները հավիտյան
Թող սրտիս հետ մեր հողերում ծրփծրփան։

Թե հազար սիրտ, հազար գարուն ունենամ,
Այն քեզ կտամ, Սովետական Հայրենիք,
Քեզ հետ մի սիրտ, մի թև դարձած
կը սուրամ,
Թե հազար սիրտ, հազար գարուն ունենամ։

ՌՈՒԲԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ